



## Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2010թ. մայիսին /վերլուծություն/

2010թ. մայիսին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 13517 գործարքներ, որոնց քանակը 2009թ. մայիսի համեմատ աճել է 18.2%-ով, իսկ 2010թ. ապրիլի համեմատ նվազել՝ 12.6%-ով:

2010թ. մայիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի և Երևան քաղաքի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2010թ. մայիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2010թ. մայիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 3339 օտարման գործարքների 82.0%-ը կազմել են առուվաճառքները, 16.9%-ը՝ նվիրատվությունները և 1.1%-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 38.5%-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 35.8%-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանները:

2010թ. մայիսին, 2010թ. ապրիլի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակը նվազել է 13.9%-ով, իսկ 2009թ. մայիսի համեմատ աճել՝ 15.4%-ով:

2010թ. մայիսին Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 65.4%-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2010թ. մայիսին, 2010թ. ապրիլի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 6.5%-ով, իսկ 2009թ. մայիսի համեմատ աճել՝ 21.3%-ով:

2010թ. մայիսին Երևան քաղաքի վարչական շրջաններում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Վարչական շրջաններ	Միջին գները /դրամ/		
	մայիս 2009թ.	մայիս 2010թ.	ապրիլ 2010թ.
Կենտրոն	461300	469500	469200
Արաբկիր	354400	392200	389300
Քանաքեռ-Զեյթուն	274900	289700	288500
Նոր-Նորք	225600	244700	243000
Ավան	221500	247900	242500
Էրեբունի	238900	252600	251400
Շենգավիթ	239000	262100	256900
Դավթաշեն	252600	280400	277200
Աջափնյակ	234900	242300	242300
Մալաթիա-Սեբաստիա	218700	251200	245500
Նուբարաշեն	134700	145900	144500
<b>Միջինը Երևանում /բացի Նորք-Մարաշից/</b>	<b>259700</b>	<b>279900</b>	<b>277300</b>

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2010թ. մայիսին բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2010թ. ապրիլի համեմատ, աճել են 0.9%-ով:

2010թ. մայիսին մարզերում վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 276 բնակարաններ, որոնց քանակը 2010թ. ապրիլի համեմատ նվազել է 6.1%-ով, իսկ 2009թ. մայիսի համեմատ աճել՝ 23.2%-ով:

2010թ. մայիսին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		մայիս 2009թ.	մայիս 2010թ.	ապրիլ 2010թ.
Արագածոտն	Աշտարակ	124100	142700	142700
	Ապարան	44000	45400	45400
	Թալին	46500	53400	52800
Արարատ	Արտաշատ	90100	95700	93400
	Մասիս	125000	133900	130900

	Վեղի	85100	95500	94400
	Արարատ	86000	84700	85700
Արմավիր	Վաղարշապատ	172900	165800	162400
	Արմավիր	122000	122500	119500
	Մեծամոր	72500	84900	83800
Գեղարքունիք	Սևան	88200	95600	93300
	Գավառ	47100	47300	46400
	Մարտունի	76700	86200	86200
	Վարդենիս	32200	33200	33200
	Ճամբարակ	18600	19700	19500
Լոռի	Վանաձոր	88800	95200	93000
	Ստեփանավան	52400	58200	58200
	Մայիսակ	73800	80700	80700
	Այվերդի	33400	32000	31600
	Տաշիր	34800	36100	35700
	Թումանյան	6100	6100	6100
	Շամլուղ	3400	3400	3400
	Ախթալա	14000	14200	14200
Կոտայք	Աբովյան	141300	162400	160600
	Նոր Հաճն	134900	129700	129700
	Բյուրեղավան	96000	105100	103300
	Եղվարդ	119200	115900	117400
	Հրազդան	63400	63800	62500
	Ծաղկաձոր	182300	181500	181500
	Զարենցավան	83200	80000	78100
Շիրակ	Գյումրի	101600	120800	120300
	Արթիկ	57500	60600	59400
	Մարալիկ	30000	30800	30800
Սյունիք	Գորիս	120100	139600	139600
	Կապան	112600	100000	100600
	Սիսիան	88800	80500	79000
	Մեղրի	54200	58700	58700
	Ագարակ	33100	33500	33500
	Քաջարան	57900	59600	59800
	Դաստակերտ	8000	8000	8000
Վայոց Ձոր	Վայք	71200	72300	72300
	Եղեգնաձոր	106200	106800	106800
	Զերմուկ	113900	114000	114000
Տավուշ	Դիլիջան	95800	104300	102100
	Իջևան	127800	140600	138700
	Բերդ	43100	42200	42000
	Նոյեմբերյան	34000	33900	33900
	Այրում	24000	24100	24100

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2010թ. մայիսին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2010թ. ապրիլի համեմատ, աճել են 0.8 %-ով:

2010թ. մայիսին հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 340 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 95, մարզերում միասին վերցրած՝ 245: 2010թ. մայիսին, 2010թ. ապրիլի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակը նվազել է 26.2%-ով, ընդ որում Երևանում 39.9%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 19.1%-ով: 2009թ. մայիսի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակն աճել է

32.8%-ով, ընդ որում Երևանում՝ 2.2 անգամ, իսկ մարզերում միասին վերցրած՝ 15.0%-ով:

2010թ. մայիսին Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Վարչական շրջաններ	Միջին գները /դրամ/		
	մայիս 2009թ.	մայիս 2010թ.	ապրիլ 2010թ.
Կենտրոն	501200	487700	487200
Արաբկիր	396400	399200	393000
Քանաքեռ Զեյթուն	308700	294700	293300
Նորք Մարաշ	307700	287200	286200
Ավան	272100	251900	247700
Էրեբունի	281500	260300	259400
Շենգավիթ	271000	265900	259400
Դավթաշեն	297900	286100	283400
Աջափնյակ	274300	249400	249000
Մալաթիա-Մեքաստիա	260300	253200	246800
Նուբարաշեն	155300	148400	148100
<b>Միջինը Երևանում /բացի Նոր Նորքից/</b>	<b>302400</b>	<b>289500</b>	<b>286700</b>

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2010թ. մայիսին անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2010թ. ապրիլի համեմատ, աճել են 1.0%-ով:

2010թ. մայիսին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		մայիս 2009թ.	մայիս 2010թ.	ապրիլ 2010թ.
Արագածոտն	Աշտարակ	136600	150200	149500
	Ապարան	46900	50400	49400
	Թալին	51900	56800	56000
Արարատ	Արտաշատ	96900	101700	100900
	Մասիս	137300	136900	133300
	Վեդի	93800	99700	98200
	Արարատ	87500	93600	93600
Արմավիր	Վաղարշապատ	178200	170200	167700
	Արմավիր	126400	126500	126000
Գեղարքունիք	Սևան	98800	98300	96700
	Գավառ	56800	51200	49400
	Մարտունի	83000	90200	89200

	Վարդենիս	39200	35700	35500
	Ճամբարակ	22500	22100	21900
Լոռի	Վանաձոր	97800	100700	99000
	Ստեփանավան	58500	62600	61900
	Սպիտակ	77500	84400	84000
	Ալավերդի	36700	35700	35400
	Տաշիր	39400	39800	39300
	Թումանյան	10400	10700	10700
	Շամլուղ	7400	7500	7500
	Ախթալա	18200	18200	18200
	Կոտայք	Աբովյան	158900	173200
Նոր Հաճն		145400	136300	135900
Բյուրեղավան		109700	109600	109600
Եղվարդ		130400	128600	128400
Հրազդան		70900	67600	66800
Ծաղկաձոր		284000	312600	310200
Չարենցավան		92200	82000	81100
Շիրակ	Գյումրի	113100	125600	125100
	Արթիկ	64300	63400	62400
	Սարալիկ	37000	33100	32800
Սյունիք	Գորիս	127500	145100	144600
	Կապան	117900	105300	105100
	Սիսիան	96300	85200	84900
	Մեղրի	60400	62100	61800
	Ագարակ	36700	35600	35500
	Դաստակերտ	10400	10500	10500
Վայոց Ձոր	Վայք	79200	76300	75200
	Եղեգնաձոր	116900	115400	115200
	Ջերմուկ	111800	120800	120400
Տավուշ	Դիլիջան	110300	110700	106600
	Իջևան	143400	144700	142900
	Բերդ	48600	44700	44600
	Նոյեմբերյան	38700	36200	36000
	Այրում	25800	26000	26000

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2010թ. մայիսին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2010թ. ապրիլի համեմատ, աճել են 1.0 %-ով:

Ընդհանուր առմամբ, 2010թ. մայիսին հանրապետությունում օտարվել են 1214 միավոր /847.39 հա/ հողեր, որից Երևանում` 61 միավոր /7.94 հա/: Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր` 529 միավոր /787.66 հա/, որից Երևանում` 5 միավոր /1.42 հա/,
- բնակելի կառուցապատման հողեր` 494 միավոր /39.83 հա/, որից Երևանում` 38 միավոր /2.48 հա/,
- հասարակական կառուցապատման հողեր` 170 միավոր /9.19 հա/, որից Երևանում` 18 միավոր /4.04 հա/,
- արդյունաբերական օբյեկտների հողեր` 9 միավոր /1.31 հա/,
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հողեր` 8 միավոր /8.87 հա/,
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողեր` 4 միավոր /0.53 հա/ ընդհանուր մակերեսով:

2010թ. մայիսին հանրապետությունում օտարված հողերից 1091 միավորի /769.26 հա/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում՝ 45 միավոր /4.80 հա/, նվիրատվության գործարքներ՝ 98 միավորի /69.30 հա/, որից Երևանում՝ 14 միավոր /3.05 հա/ և փոխանակության գործարքներ՝ 25 միավորի /8.83 հա/, որից Երևանում՝ 2 միավոր /0.08 հա/:

Հանրապետությունում 2010թ. մայիսին, 2009թ. մայիսի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքների քանակն աճել է 19.6%-ով: Ընդ որում, գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակն աճել է 12.6%-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ աճել է 30.1%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ նվազել է 30.8%-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Սյունիքի մարզում՝ 416.55 հա, որից 416.11 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 36.6%-ը կամ 399 գործարքներ /480.84 հա/ հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում՝ 4 գործարքներ /1.14 հա/, իսկ 62.9%-ը կամ 686 միավորը /288.24 հա/ հանդիսացել են մասնավոր սեփականության հողեր, որից Երևանում՝ 41 միավոր /3.67 հա/:

2010թ. մայիսին հանրապետությունում գրանցվել է հողերի վարձակալության իրավունքի վաճառքի 6 գործարք /0.19 հա/, այդ թվում նաև կառուցապատման իրավունքի վաճառքի գործարքները:

Ստորև ներկայացվում է 2010թ. մայիսին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը և վարձակալության իրավունքի վաճառքները:

	<b>Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող</b>								<b>Մասնավոր սեփականություն հանդիսացող</b>											
	Գյուղատնտեսական նշանակության հողերի				Արդյունաբերական օբյեկտների հողեր				Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի				Արդյունաբերական օբյեկտների հողեր			
									Բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի						Բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/					
ԼԱՆԱՆ	0	0.00	0	0.00	1	0.03	3	1.11	5	1.42	0	0.00	31	1.86	5	0.39				
ԱՊԱՏԱՆ	20	16.22	0	0.00	1	0.03	3	0.16	59	45.61	0	0.00	37	3.73	0	0.00				
ԱՐԱՐԱՏ	5	7.94	0	0.00	3	0.23	18	0.59	34	21.47	1	0.26	37	2.75	1	0.01				
ԱՄԱՎԻՐ	6	3.23	1	0.51	0	0.00	9	0.60	39	34.60	0	0.00	47	4.07	1	0.03				
ԱՂԱՐՔՈՒՆԻՔ	0	0.00	2	0.04	8	0.83	3	0.21	27	18.19	1	0.01	14	1.24	2	0.08				
ՔԻ	2	0.55	0	0.00	36	2.91	28	0.24	69	29.92	0	0.00	10	0.89	3	0.08				
ՏԱՅՐ	25	21.54	1	0.03	48	3.54	39	1.79	104	64.52	1	0.39	78	6.78	5	0.06				
ՂԱՆԿ	3	4.14	0	0.00	20	0.53	8	0.12	26	23.15	0	0.00	10	1.51	1	0.11				
ՈՒՆԻՔ	24	404.49	1	0.03	5	0.06	8	0.19	12	11.62	0	0.00	1	0.06	1	0.004				
ՍՅՈՑ ՁՈՐ	1	0.20	0	0.00	3	0.15	9	0.08	1	1.00	0	0.00	3	0.22	1	0.01				
ՎՈՂ	4	4.74	1	0.06	44	2.95	0	0.00	7	2.75	0	0.00	4	0.27	2	0.59				
ՂԱՄԸՆՐ	90	463.05	6	0.67	169	11.26	128	5.09	383	254.25	3	0.66	272	23.38	22	1.36				

Ստորև ներկայացվում է 2010թ. մայիսին պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ հողերի նպատակային նշանակության, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող

տարածքների, հիդրոէկոտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը.

	Ուղղակի վաճառք								Աճուրդ վաճառք									
	Ընդամենը		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողերի		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապ. հողերի								բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապ. հողերի	
Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	
Երևան	4	1.14	0	0.00	1	0.03	3	1.11	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00
Արագածոտն	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	23	16.29	19	16.11	0	0.00	1	0.03	3	0.15
Արարատ	2	0.01	0	0.00	0	0.00	2	0.01	24	8.75	5	7.94	0	0.00	3	0.23	16	0.58
Արմավիր	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	15	4.29	5	3.18	1	0.51	0	0.00	9	0.60
Գեղարքունիք	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	13	1.08	0	0.00	2	0.04	8	0.83	3	0.21
Լոռի	8	0.15	0	0.00	3	0.14	5	0.01	58	3.55	2	0.55	0	0.00	33	2.77	23	0.23
Կոտայք	10	0.63	0	0.00	7	0.52	3	0.11	102	25.27	24	20.55	1	0.03	41	3.02	36	1.67
Շիրակ	7	0.09	0	0.00	4	0.07	3	0.02	24	4.70	3	4.14	0	0.00	16	0.46	5	0.10
Սյունիք	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	35	404.54	21	404.26	1	0.03	5	0.06	8	0.19
Վայոց Ձոր	1	0.003	0	0.00	0	0.00	1	0.003	12	0.43	1	0.20	0	0.00	3	0.15	8	0.08
Տավուշ	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	47	7.15	2	4.14	1	0.06	44	2.95	0	0.00
<b>Ընդամենը</b>	<b>32</b>	<b>2.02</b>	<b>0</b>	<b>0.00</b>	<b>15</b>	<b>0.76</b>	<b>17</b>	<b>1.26</b>	<b>353</b>	<b>476.05</b>	<b>82</b>	<b>461.07</b>	<b>6</b>	<b>0.67</b>	<b>154</b>	<b>10.50</b>	<b>111</b>	<b>3.81</b>

Հանրապետությունում 2010թ. մայիսին արձանագրվել են նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքների 8 գործարքներ /1.98 հա ընդհանուր մակերեսով/:

Հանրապետությունում 2010թ. մայիսին, 2009թ. մայիսի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակն աճել է 26.9%-ով: Ընդ որում, Երևանում հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակը մնացել է անփոփոխ, իսկ մարզերում միասին վերցրած աճել է 26.9%-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակն աճել է 1.2%-ով, բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի նկատմամբ աճել է 2.6 անգամ, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ նվազել է 4.3%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ նվազել է 33.3%-ով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2010թ. մայիսին գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
<b>Արագածոտնի մարզ</b>										
Աշտարակ	18	7.03	69.1	919.2	715.5	48	19.17	365.0	12000.0	4345.0
Ապարան						1	0.34	86.5	2727.3	580.0
Թային	1	9.09	41.5	41.5	41.5	7	22.55	93.6	5494.5	535.2
Ծաղկահովիտ						3	3.55	79.5	1000.0	245.5
<b>Արարատի մարզ</b>										

Արտաշատ	2	1.91	75.9	86.4	81.1	13	3.36	335.1	10833.3	2295.5
Մասիս						10	12.20	200.0	11904.8	3016.9
Վեդի	3	6.03	60.6	82.5	72.7	11	5.92	207.0	10795.1	1809.1
Արմավիրի մարզ										
Արմավիր	3	1.49	63.3	72.0	68.0	18	9.91	294.3	9090.0	1249.1
Բաղրամյան						8	19.70	90.6	2561.1	721.4
Վաղարշապատ	2	1.69	74.8	383.3	229.0	13	4.98	444.4	11764.7	3258.2
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						4	0.32	199.8	1875.0	410.0
Ճամբարակ						9	8.83	60.5	953.3	285.5
Մարտունի						3	0.71	51.1	2850.0	622.5
Սևան						7	1.89	52.2	2134.8	255.8
Վարդենիս						4	6.45	41.2	2575.1	451.6
Լոռու մարզ										
Այվերդի	1	0.15	1100.0	1100.0	1100.0	33	13.70	170.4	6424.2	835.5
Գուգարք						7	1.20	234.6	6065.9	1095.8
Սպիտակ	1	0.40	100.0	100.0	100.0	1	0.11	250.0	5555.5	640.5
Ստեփանավան						13	8.95	90.6	1686.6	350.2
Տաշիր						15	5.95	45.3	1384.4	180.5
Կոտայքի մարզ										
Աբովյան	9	7.61	135.0	612.2	310.4	44	9.69	279.3	11942.7	4601.8
Եղվարդ	7	6.55	80.8	243.0	189.4	48	46.40	174.4	11971.8	3467.0
Հրազդան	8	6.39	133.6	1234.0	467.9	12	8.43	130.5	10256.4	1760.5
Շիրակի մարզ										
Ախուրյան	1	2.20	297.0	297.0	297.0	8	8.35	252.0	1693.1	544.0
Ամասիա						1	5.56	40.9	261.0	128.6
Անի	2	1.94	30.0	32.0	31.0	3	2.83	110.6	546.9	303.5
Աշոցք						9	5.42	58.5	215.8	110.4
Արթիկ						5	1.00	79.4	1428.6	278.3
Սյունիքի մարզ										
Գորիս						8	5.25	92.6	1023.2	532.5
Կապան								120.0	841.6	300.5
Մեղրի	21	404.26	21.5	23.5	21.6	1	0.11	193.0	3000.0	630.2
Սիսիան						3	6.26	46.3	1977.4	330.0
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	1	0.20	52.5	52.5	52.5	1	1.00	125.0	10000.0	1620.0
Վայք								58.8	1430.7	513.4
Տավուշի մարզ										
Բերդ								213.3	3783.8	572.5
Իջևան						4	1.94	267.5	9454.5	1115.5
Նոյեմբերյան	2	4.14	289.8	294.5	292.2	3	0.82	46.7	7368.4	825.0

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կապված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2010թ. մայիսին բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների			Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների		
	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000 .0քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/



			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
<b>Արագածոտնի մարզ</b>										
Աշտարակ						27	24181.0	130.7	22200.0	2573.8
Ապարան						6	6621.0	124.1	609.6	275.0
Թալին	1	263.0	304.2	304.2	304.2	4	6507.0	63.2	1454.8	144.0
Ծաղկահովիտ								60.0	214.3	79.0
<b>Արարատի մարզ</b>										
Արտաշատ	2	1183.0	145.0	601.1	373.1	9	9086.0	173.9	7140.3	893.3
Մասիս	1	1130.0	541.3	541.3	541.3	25	16160.0	187.5	25000.0	1217.0
Վեդի						3	2300.0	126.1	5000.0	661.9
<b>Արմավիրի մարզ</b>										
Արմավիր						18	17548.0	131.6	9090.9	1214.0
Բաղրամյան								100.0	833.3	192.5
Վաղարշապատ						29	23195.0	197.4	26528.4	1530.0
<b>Գեղարքունիքի մարզ</b>										
Գավառ	4	4760.0	183.3	183.6	183.4	5	3070.0	186.6	1084.3	480.0
Ճամբարակ								71.3	2286.2	144.4
Մարտունի						4	4370.0	119.3	5000.0	274.8
Սևան	4	3506.0	118.5	447.3	327.7	1	500.0	240.0	3110.4	235.0
Վարդենիս						4	4430.0	72.5	987.2	150.0
<b>Լոռու մարզ</b>										
Ալավերդի	5	413.0	556.5	931.6	631.8			114.3	1388.9	210.1
Գուգարք	4	2309.0	2105.5	5001.4	3546.5	2	2015.0	77.9	14083.3	795.5
Սյուխակ	19	22990.0	49.6	74.6	68.1	5	4449.0	104.9	1348.3	199.2
Ստեփանավան	5	1950.0	172.5	555.3	478.2	2	1200.0	88.2	1666.7	152.5
Տաշիր						1	1280.0	45.3	400.0	78.5
<b>Կոտայքի մարզ</b>										
Աբովյան	7	3563.9	845.8	4076.0	1759.5	26	20671.0	264.5	35353.5	2010.0
Եղվարդ	32	25100.0	1778.7	2850.1	1867.8	46	39596.0	173.6	27000.0	2864.1
Հրազդան	2	1500.0	430.0	1942.9	1186.4	5	7000.0	117.7	34848.5	1337.0
<b>Շիրակի մարզ</b>										
Ախուրյան	8	2189.3	528.0	5067.9	2348.5	4	2849.7	113.6	18750.0	330.7
Ամասիա								45.3	274.7	71.0
Անի	6	2054.0	292.5	676.2	433.0	2	1772.0	67.9	180.6	132.0
Աշոցք						1	3400.0	40.8	144.0	60.0
Արթիկ	2	341.0	276.3	556.6	416.5	3	7061.0	111.8	5000.0	216.5
<b>Սյունիքի մարզ</b>										
Գորիս								112.2	1700.0	310.0
Կապան	5	616.8	177.7	1552.7	1029.9	1	600.0	67.9	2638.9	248.0
Մեղրի								68.5	632.9	156.5
Միսիան								123.5	875.0	164.5
<b>Վայոց Ձորի մարզ</b>										
Եղեգնաձոր	3	1460.0	749.2	757.5	753.9			96.7	7659.6	440.0
Վայք						3	2220.0	120.7	1448.3	171.5
<b>Տավուշի մարզ</b>										
Բերդ								75.8	810.0	97.2
Իջևան	43	29078.0	158.4	3000.0	2868.3	4	2687.0	74.1	14423.1	479.3
Նոյեմբերյան	1	410.0	110.6	110.6	110.6			125.0	1948.1	168.0

2010թ. մայիսին հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել են նախկինում անհատույց սեփականաշնորհման 6 գործարքներ 0.38 հա մակերեսով, ընդ որում 2-ը՝ /0.16 հա/ Կոտայքի և 4-ը՝ /0.22 հա/ Շիրակի մարզերում:

2010թ. մայիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 926 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական

գրանցումների քանակի 6.9%-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 84.1%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

2010թ. մայիսին, 2010թ. ապրիլի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը նվազել է 3.1%-ով, իսկ 2009թ. մայիսի համեմատ՝ 23.8%-ով:

2010թ. մայիսին հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 35 բնակարանների, 28 անհատական բնակելի տների, 396 հասարակական, 71 արտադրական նշանակության օբյեկտների, 356 միավոր /610.25 հա/ հողերի և 40 ավտոտնակների վարձակալության գործարքներ: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքի պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2010թ. մայիսին Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 19 վարձակալության գործարքների /այդ թվում 13 միավոր՝ 0.30 հա, կառուցապատման իրավունքով/ քանակը 2010թ. ապրիլի համեմատ աճել է 3.2 անգամ, իսկ 2009թ. մայիսի համեմատ նվազել՝ 64.2%-ով: 2010թ. մայիսին հանրապետությունում վարձակալված 610.25 հա հողերից 0.99 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 609.26 հա հողերի 36.38 հա կազմում են արդյունաբերական օբյեկտների, 0.79 հա՝ հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Գեղարքունիքի մարզում՝ 323.92 հա, որից 321.59 հա գյուղատնտեսական նշանակության: Համայնքների վարչական սահմաններից դուրս վարձակալվել են 174.70 հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

Ստորև ներկայացվում է 2010թ. մայիսին համայնքների վարչական սահմանների ներսում և վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունն ըստ մարզերի.

<i>Մարզի անվանումը</i>	<i>Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական.նշ հողերի</i>		<i>Համայնքների վարչական սահմանների ներսում գտնվող գյուղատնտեսական.նշ հողերի</i>	
	<i>Վարձակալության գործարքների քանակները /միավոր/</i>	<i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i>	<i>Վարձակալության գործարքների քանակները /միավոր/</i>	<i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i>
Արագածոտն	0	0.00	6	7.85
Արարատ	0	0.00	14	31.75
Արմավիր	0	0.00	18	51.24
Գեղարքունիք	15	174.70	24	146.89
Լոռի	0	0.00	6	24.22
Կոտայք	0	0.00	4	6.41
Շիրակ	0	0.00	31	25.97
Սյունիք	0	0.00	21	60.88
Վայոց Ձոր	0	0.00	52	12.77
Տավուշ	0	0.00	4	4.28
<b>Ընդամենը</b>	<b>15</b>	<b>174.70</b>	<b>180</b>	<b>372.26</b>

2010թ. մայիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1696 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 12.5%-ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2010թ. ապրիլի համեմատ, նվազել է 16.3%-ով, իսկ 2009թ. մայիսի համեմատ աճել՝ 57.5%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /46.7%/, առանձնատների /25.0%/, հասարակական նշանակության օբյեկտների /12.6%/ և հողերի /11.9%/ նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 790 գրավադրման գործարքներից ծագող

իրավունքների պետական գրանցումների քանակը, 2010թ. ապրիլի համեմատ, նվազել է 11.9%-ով, իսկ 2009թ. մայիսի համեմատ՝ աճել 57.5%:

2010թ. մայիսին հանրապետությունում գրավադրվել են 267.59 հա հողեր, որից 4.83 հա՝ Երևանում: Ընդ որում, գրավադրված հողերի 96.3%-ը կամ 257.59 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արմավիրի մարզում՝ 115.59 հա, որից 114.33 հա՝ գյուղատնտեսական նշանակության:

2010թ. մայիսին հանրապետությունում իրականացվել են հիփոթեքային գրավադրման 154 գործարքներ, որից 115-ը՝ Երևանում: Ընդ որում, հիփոթեքային գրավադրման գործարքներից 84.4%-ն իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 12.3%-ն՝ անհատական բնակելի տների, 2.6%-ն՝ հասարակական նշանակության օբյեկտների, 0.6%-ն՝ արտադրական նշանակության օբյեկտների նկատմամբ: 2010թ. ապրիլի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը նվազել է 17.2%-ով, ընդ որում Երևանում՝ 18.4%-ով, իսկ մարզերում՝ 13.3%-ով: 2009թ. մայիսի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակն աճել է 2.7 անգամ, ընդ որում Երևանում՝ 3.4 անգամ, մարզերում՝ 69.6%-ով:

2010թ. մայիսին հանրապետությունում արձանագրվել են հասարակական նշանակության օբյեկտների ապապետականացման միջոցով մասնավորեցման 1 գործարք՝ Արարատի մարզում, որն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 0.01%: Մասնավորեցման գործարքների քանակը, 2010թ. ապրիլի և 2009թ. մայիսի համեմատ մնացել է անփոփոխ:

2010թ. մայիսին հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 1760 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը 2010թ. ապրիլի համեմատ նվազել է 27.0%-ով, իսկ 2009թ. մայիսի համեմատ՝ 16.9%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 13.0%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /27.2%/: